



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝  
ՀՀ ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«14» 04 2017թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՈՒԹՅԱՆ

ԲՓ 38

Ձեռնարկողը՝

«ՍԱՀԱԿ-1» ՍՊԸ

Գ. Ապագա 15 բող. Տուն 54

Գործունեությունը՝

Ապագայի ավագի և կոպճագլաքարային խառնուրդի  
հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվեդրվություն  
«Արմավիրի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 38

«14» 04 2017թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Ապագայի ավագի և կոպճագլաքարային խառնուրդի  
հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝

«ՍԱՀԱԿ-1» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝

«Ա»

Տեղադրման վայրը՝

ՀՀ Արմավիրի մարզ, Ապագա համայնք

Հանքավայրը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում: Այն տեղադրված է 30-34կմ հարավ, հարավ-արևելք Երևան քաղաքից և 10կմ էջմիածին քաղաքից: Մոտակա բնակավայրերն են Գայ, Ջայկաշեն, Երասխառն, Արտաշատ և Ապագա գյուղերը, որոնց հետ հանքավայրը կապված է գրունտային և սասֆալտապատ ճանապարհներով: Տարածքը ծածկված է ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներով:

Ապագայի ավագի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի շահագործման տարեկան արտադրողականությունը կազմի ԱԿԳԽ-ի 21000մ<sup>3</sup> զանգված:

Օգտակար հանածոն ներկայացված է ավագակոպճագլաքարային խառնուրդով, որի միջինը հզրությունը կազմում է 5.64մ:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի 23.04.1971թ թիվ 202 արձանագրությամբ, ներքոհիշյալ քանակությամբ և կարգերով:

ա/ որպես մանր և խոշոր լցանյութ բետոնի համար / հազ.մ<sup>3</sup>/ A կարգով – 1355.0խմ, B կարգով – 3047.0խմ, C կարգով – 9497.0խմ

Այդ թվում

բ/ պաշարներ, որոնք պիտանի են ասֆալտ-բետոնի խառնուրդի համար /հազ.մ<sup>3</sup>/ A – 536.0խմ, B – 541.0խմ, C1 – 2098խմ:

Ավագի և կոպճագլաքարային խառնուրդի ելքը համապատասխանաբար կազմում է 70% և 30%:

Նախագծվող բացահանքի տարածքը գրադեցնում է 29.5հա մակերես: Տարածքը նախկինում շահագործված է և ներկայումս այն անբողջությամբ ջրածածկ է: Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները և օգտակար հանածոյի փոքր հզրությունը հնարավորություն են տալիս ընդունել մշակման բաց եղանակ, ընդունված է համատարած մեկ աստիճանով համակարգ, աստիճանի բարձրությունը ըստ հանքաշերտի հզրության:

Ելնելով հանքավայի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից նախագծում ընդունված են բացահանքի հետևյալ պարամետրերը.

Արագած Տէ՛ք օքլանչ Հեթու



- Բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթի վրա - 982մ;
- Բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթի վրա - 664մ;
- Բացահանքի ընդհանուր մակերեսը մակերևույթի վրա - 295000մ<sup>2</sup>
- Ավազակոպճագլաքարային խառնուրդի միջին հզորությունը - 3.25մ /2.1-4.8մ/:

Բացահանքի մարգող պաշարները կազմում են 958750մ<sup>3</sup>: Ենթակա բացահանքի վերջնական եզրագծից և կողային բնամասերում ու հատակում թողնվող համապատասխանաբար 19000մ<sup>3</sup> և 29500մ<sup>3</sup> կորուստներից, ԱԿԳԻ արդյունաբերկան /կորզվող/ պաշարները կազմում են 910250մ<sup>3</sup> ԱԿԳԻ-ի գանգված:

Բացահանքային դաշտի տարածքում նախագծային կորուստները որոշվում են ըստ երկու խմբերի.

- Ըստ լեռնատեխնիկական պայմանների (կախված օգտակար հաստաշերտի տեղադրման անկման անկյունից): Այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում - 19000մ<sup>3</sup>, և օգտակար հանածոն հիմնատակող կավային ապարների աղտոտումից զերծ պահելու համար բացահանքի հատակում - 29500մ<sup>3</sup> /0.10մ հզորությամբ ԱԿԳԻ-ի շերտ/: Այս կորուստները կազմում են մարգող պաշարների 5% ը:
- Շահագործողական կորուստները: Տվյալ դեպքում դրանք կանխորոշվում են արդյունահանանան տեխնոլոգիայով և ընդունված են 0.5%:

Մակարացման ապարները բացահանքի սահմաններում ամբողջությամբ բացակայում են, ուստի մակարացման և լցակույտառաջացման աշխատանքներ չեն իրականացվելու: Բացահանքի բնականոն աշխատանքի համար իրականացվելու են ներքոհիշյալ լեռնանախապատրաստական աշխատանքները՝

- Բացահանքի արևելյան մասով անցնող ավտոճանապարհից դեպի արտադրական հրապարակ գրունտային ճանապարհի անցկացում՝ 765մ երկարությամբ, 7մ լայնությամբ, 540մ<sup>3</sup> ծավալով:
- Բացահանքի հյուսիսային մասում արդյունաբերական հրապարակի կառուցում՝ 1200մ<sup>2</sup> մակերեսով և 400մ<sup>3</sup> ծավալով:

Զանի որ տարածքը ջրածածկ է, ուստի ԱԿԳ խառնուրդը հիմնականում արդյունահանվելու է EL-604B մակնիշի հողածուծ մեքենայով: Հողածուծ մեքենան ռետինե խողովակի միջոցով կլանում է ջրախառն ավազակոպճային խառնուրդը, որը լցվելով բաժանարար սարքի մեջ տեսակավորվում է կոպիճը, ավազը և ջուրը: Կոպիճը կուտակվում է առանձին, իսկ ջրախառն ավազը լցվում է նորա համար առանձնացված փոսի մեջ՝ պարզաբան (40մx20մx2մ), որտեղ ավազը ջրազրկվում է:

Յնարավոր է ամբողջ բացահանքի եզրագծով, ափից ոչ մեծ հեռավորությունների վրա /էքսկավատորի շերեփման շառավի չափով/ աշխատանքներն իրականացվեն Յ-10011 էքսկավատոր-դրագլայնի միջոցով, ներքեւ շերեփմամբ և հանքաշերտի կտուրում բեռնաթափման եղանակով: Զրագրկումից հետո ավազակոպճագլաքարային խառնուրդի տեղափոխումը արտադրական հրապարակ կատարվում է TO-25 մակնիշի միաշերեք անվային բարձիչի միջոցով:


Բարձնան ընթացքում ԱԿԳԻ-ի կույտավորումը կատարվում է բուլղոգերի միջոցով: Բացահանքի լրիկ մշակումից հետո բացահանքում կուտակվող ջրերը կարելի է օգտագործել ուղղական կամ տարածքը օգտագործել ձկնաբուծության և այլ նպատակներով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, մոտեցող ավտոճանապարհը ջրելու համար տեխնիկական ջրով մատակարարելու համար:

Խմելու ջուրը բերվելու է ԱԲ-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռով: Որպես տեխնիկական ջուր կօգտագործվի բացահանքի տարածքի ջուրը:

Կենցաղային կեղտաջրերը լցվելու են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են նոտակա մաքրման կայան:

Բացահանքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Ապագա համայնքի տարածքում, որի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացմանն իր ներդրումը կունենա նաև ընկերությունը: Ընկերությանը իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի



ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: Տարեկան նախատեսվում է 215 հազ. դրամ գումար:

Հանքարդյունահաննան աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները: Տարածքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնում չի իրականացվում, քանի որ բացահանքի տարածքն ամբողջությամբ ջրածածկ է: Վերականգնվելու է միայն արտադրական հրապարակը 1200մ<sup>2</sup> մակերեսով /0.12հա/, ինչի համար նախատեսված է 278.2հազ. դրամ ծախս:

Նավթամթերքները պահպելու են բացահանքի արտադրական հրապարակում հատկացված տեղում: Վերջինիս հատակը բետոնապատվում է և տրվում համապատասխան թեքություն, որը կապահովի արտահոսված նավթամթերքի հոսքը դեպի այն հավաքող փոսը:

Նախատեսվում է աշխատակից-լիցքավորող, որը սահմանված կարգով բաց է թողնելու նավթամթերքները, միաժամանակ պատասխանատու է հակահրդեհային և նրանց հետ կապված բնապահպանական միջոցառումների համար: Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջրդոնները/ և կենցաղային աղբը: Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքվում են առանձին տարաների մեջ և հանձնվում է յուղերի և քսայուղերի երկրորդական վերամշակման կետին: Մաշված անվարողերը, որոնց քանակը տարեկան 2 կոմպլեկտ է, հանձնվում է շահագրգիռ կազմակերպություններին: Հնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվելու են առանձին տեղում և հանձնվելու են, որպես մետաղի ջարդոն:

Կենցաղային աղբը տեղափոխվելու է մուտակա աղբահավաք կետեր:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա
- Փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,
- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:
- Մեքենաների աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոփրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեղոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսք տեղի չունենա:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով՝ հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային ըննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են << բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:



## Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է «Հ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ»:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

3. Առաջացած շինաղբի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «Հ օրենսդրությամբ սահմանված կարգով»:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՀՀԱԿ-1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հ Արմավիրի մարզի Ապագայի ավագի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



2. Զուոնայան